# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 306

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցման 20.05.2003 թվականի թիվ 1684660 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ. որոշում եմ՝

1.Քաղաքացու սեփականություն հանդիսացող 06-013-0033-0006 ծածկագրի բնակելի կառուցապատման հողամասին իր շենք-շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գյուղ Ամրակից 1-ին փողոց, թիվ 50:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 09 22
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 307

## ՍԱՄՎԵԼ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, հիմք ընդունելով Սամվել Մատինյանի կողմից ներկայացված դիմումը, «Վանարախ» ՍՊԸ-ի կողմից մշակված նախագիծը, որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի բնակիչ Սամվել Մատինյանին տալ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Գյուլագարակ 21-րդ փողոց, թիվ 10 հասցեում բնակելի տուն կառուցելու թույլտվություն:
2. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 09 22
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 308

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ա/Ձ «ԳԱԳԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ» կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ. որոշում եմ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-057-0073-0001 ծածկագրից տարանջատված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Կուրթան 12-րդ փողոց. թիվ 7:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 20 թ. 09 24
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 309

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-104-0018-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔ՝ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաժակ Չիլինգարյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի, Վարդաբլուր գյուղի, Կենտրոնական փողոց թիվ 39 հասցեում գտնվող հողամասի և հողամասում առկա շենք, շինությունների տարանջատման արդյունքում առաջացած միավորներին փոստային հասցե տրամադրելու, հողամասի վրա ինքնակամ կառույցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 02.11.2002թ. N 902838 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, որոշում եմ.

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական փողոց թիվ 39 հասցեի, 06-104-0018-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» Ա/Ձ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի և 0.16656 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Խաժակ Չիլինգարյանի, Ալվարդ Սահակյանի, Վրույր Չիլինգարյանի, Անահիտ Չիլինգարյանի և Համիկ Միրզոյանի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի Կենտրոնական փողոց թիվ 39 հասցեի, Խաժակ Չիլինգարյանին, Ալվարդ Սահակյանին, Վրույր Չիլինգարյանին, Անահիտ Չիլինգարյանին և Համիկ Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող 06-104-0018-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 0.16656 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 7.13 քմ մակերեսով բնակելի տան աստիճանավանդակին կից կառուցած բաց պատշգամբը, 7.79 քմ

մակերեսով ծածկը և 13.47 քմ մակերեսով շվաքարանը:
3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 7.13 քմ մակերեսով բաց պատշգամբի համար 3922 /երեք հազար ինը հարյուր քսաներկու / ՀՀ դրամ, 7.79 քմ մակերեսով ծածկի համար 2571 /երկու հազար հինգ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ, 13.47 քմ մակերեսով շվաքարանի համար 4450 /չորս հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 10943 /տասը հազար ինը հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին:
4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Համաձայն թիվ 902838 սեփականության վկայականի՝ թիվ 3 ծածկը և 4 ցախանոցը քանդված է, գոյություն չունի:
6. Հաստատել վերը նշված ծածկագրի տակ գտվող, տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի փոստային հասցեները համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» Ա/Ձ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի.
• համաձայն հատակագծի՝ 0.07599 քմ մակերեսով հողամասում կառուցված բնակելի տանը և օժանդակ շինություններին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Վարդաբլուր Կենտրոնական փողոց թիվ 39/1 բնակելի տուն,
• համաձայն հատակագծի՝ 0.09057 քմ մակերեսով հողամասում կառուցված անասնաշենքին , ավտոտնակին և պարիսպին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ. Վարդաբլուր Կենտրոնական փողոց թիվ 39 7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 09 24
գ.Գյուլագարակ